ՀՀ, ք. Երևան 0001
110 Նալբանդյան փ.
+374 60 499 010
info@shen.am
www.shen.am

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՆՄԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծածկագիր՝ N-ARM-2025-0271-OT-2

Ամսաթիվ՝ 23 հունիսի 2026թ.

Սույնով «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպությունը (այսուհետ «Շեն» ԲՀԿ) հայտարարում է մրցույթ լիցքավորվող հիբրիդային էլեկտրական ավտոմեքենայի (plug in hybrid) գնման նպատակով:

Գնումն իրականացվելու է «*Հաց Աշխարհին» (Brot für die Welt)* կազմակերպության կողմից ֆինանսավորվող *«Փոքր գյուղացիական տնտեսությունների հզորացումը կոոպերացիայի, ագրոանտառաբուծության և աջակցող քաղաքականությունների միջոցով»* ծրագրի շրջանակում:

1. **Մասնակիցներին ներկայացվող պահանջները**

Մրցույթին կարող են մասնակցել ավտոմեքենաների ներկրմամբ և վաճառքով զբաղվող բոլոր ընկերությունները, որոնք՝

- սնանկ չեն ճանաչվել կամ չեն գտնվում սնանկության վարույթում,
- չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ, որի համար պատկան մարմինների կողմից նախաձեռնվել է վարույթ,
- ընդգրկված չեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վարվող՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցանկերում,
- հանդիսանում են մատակարարվող ավտոմեքենայի մակնիշի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում և հետագայում կիրականացնեն տվյալ ավտոմեքենայի երաշխիքային և ընթացիկ տեխնիկական սպասարկումը:

2. **Ձեռք բերվող ավտոմեքենայի նվազագույն տեխնիկական պահանջները**.

Թողարկման տարեթիվ՝	**2026թ.**
Ավտոմեքենայի տեսակը՝	**լիցքավորվող հիբրիդային էլեկտրական ավտոմեքենա, լիաքարշակ կամ հետևի քարշակ**
Թափքը՝	**SUV**
Ավտոմեքենայի գույնը՝	**սպիտակ**
Էլ. շարժիչով նվազագույն վազքը (մեկ ամբողջական լիցքավորմամբ)՝	**150 կմ**
Էլեկտրական և բենզինային շարժիչներով նվազագույն վազքը (մեկ ամբողջական լիցքավորմամբ)՝	**1000 կմ**

Էլեկտրական շարժիչի նվազագույն հզորություն (kW / ձ/ուժ)՝	**170 kW / 220 ձ/ուժ**
Լուսածերպը՝	**նվազագույնը 180մմ**

3. **Գինը**

Ավտոմեքենայի գինը պետք է ներկայացնել ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն:

4. **Վավերականությունը**

Ներկայացված գնառաջարկը պետք է վավեր լինի ներկայացման պահից առնվազն մեկամսյա ժամկետում:

5. **Ավտոմեքենայի մատակարարման ժամանակացույցը**

Ավտոմեքենայի մատակարարումը պետք է իրականացվի պայմանագրի կնքումից ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում:

6. **Առաջարկի ներկայացման կարգը**

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն ստորև նշված փաստաթղթերը.

- առաջարկվող ավտոմեքենայի տեխնիկական նկարագիրը բնութագրող փաստաթուղթ, որտեղ հստակ նշված կլինեն սույն հայտարարության 2-րդ կետում նշված տեխնիկական տվյալները,
- գնառաջարկ,
- մասնակիցներին ներկայացվող պահանջները հիմնավորող փաստաթղթերը (ներկայացված են սույն հայտարարության 1-ին կետում):

Սույն բաժնով սահմանված պահանջների չկատարումը կհանգեցնի հայտի մերժմանը:

Մրցույթի հայտը անհրաժեշտ է ներկայացնել «Շեն» ԲՀԿ հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ hzurabyan@shen.am՝ նամակի թեմայի դաշտում նշելով՝ **Գնառաջարկ-Ավտոմեքենայի գնում**:

Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետն է **2026 թ. հունիսի 29-ը, ժամը՝ 12:00:**

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.

«Շեն» ԲՀԿ, Նալբանդյան 110

Հասմիկ Զուրաբյան

Հեռախոս՝ 077 242724

Էլ-փոստ hzurabyan@shen.am

7. **Մրցույթի հաղթողի ընտրության կարգը**

Հաղթող կճանաչվի մրցույթի հրավերում նշված նվազագույն տեխնիկական պահանջներին բավարարող և նվազագույն գին/տեխնիկական հագեցվածություն (կոմպլեկտավորում) ներառող առաջարկը: